

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)		[2] Մեքիա		[3] Համար	
8	Հուլիս	2019 թ.			Բ	0056583940		
[4] Մատուցման ամսաթիվ					Ծղրտվող հաշիվ վավերագրի			
8	Հուլիս	2019 թ.			Մեքիա		Համար	
					Ծղրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ			
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ		[6] Համար			
			8 Հուլիս, 2019 թ.		Բ0056583940			
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)								
ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ								
[7.1] ՀԴՄ կտրոնի համար								

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի												
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)					0	1	0	0	6	8	1	3
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը												
[10] Անվանումը		ԱՐԹ ՔՈՆՍՏՐԱԿՏ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)										
[11] Բանկային տվյալները		Հայկեկոնոմբանկ ԲԲԸ N 163288639103										
[12] Գտնվելու վայրը (հասցեն)		ԵՐԵՎԱՆ ԲԱՆԱՔԵՆ-ԶԵՅԹՈՒՆ ՔԱՆԱՔԵՆ-ԶԵՅԹՈՒՆ ԹԱՂԱՄԱՍ ԴԱՆՀԱՂԹ 19/1 70										
[13] Լրացուցիչ տվյալներ												

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի												
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)					0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը												
[16] Անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ										
[17] Բանկային տվյալները		ՀՀ ՖՆ Աշխատակազմի գործառնական վարչություն N 900011002160										
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՍԻԿՈՆՅԱՆ Փ. 46/5										
[19] Լրացուցիչ տվյալներ												
[20] Ում միջոցով		Անուն, ազգանուն		Համար								
		Լիազորագիր		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№ Շ/Գ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ներկայումս ծավալը կամ ծառայության քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 14106617	րոպե	220	83.33		18332.6
2	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 14857917	րոպե	405	83.33		33748.65
3	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 15197317	րոպե	580	83.33		48331.4
4	իրավաբանական գրավոր թարգմանություն վրացերենից հայերեն քրեական գործ թիվ 55158017/58203216	նիշ	44895	1.67		74974.65
5	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 41200517	ժամ	14	5000		70000
6	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 30102417	րոպե	215	83.33		17915.95
7	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 90362117	րոպե	820	83.33		68330.6
8	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-արաբերեն-հայերեն քր. գործ թիվ 13202917	րոպե	1330	123.33		164028.9
9	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 15188517	ժամ	11	7000		77000

10	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն- ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 20108217	ընայն	5620	83.33		468314.6
Հնդամենք						1040977.35

Ծառայություն
մատուցող
(աշխատանք
կատարող)

KHACHATRYAN ARTUR
3208790082

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

08/07/2019 14:58:46



Ծառայություն
(աշխատանք)
ստացող



(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Արմենյան Ս.
ԽԵՇ
08.07.2019.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

28 հուլիսի 2017թ.

ք. Երևան

ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ Տ.Ղազարյանս, վերանայելով վարույթում գտնվող թիվ 14106617 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017թ. մայիսի 10-ին Իգաբեյլա Թումանյանը ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ Հակոբ Ասլանյանը և նրա կին Գոհար Ոսկանյանը, 2016 թվականի մարտից մինչև 2017թ. ապրիլի 21-ն ընկած ժամանակահատվածում կոտրել են Վ. Այգեկցի 84 տան կից գտնվող շինություն հանդիսացող ավտոտնակի փականը, ապօրինի մուտք գործել ներս, որից հետո կոտրել այդտեղ տեղադրված, պահեստարան հանդիսացող մետաղյա պահարանը ու դրա միջից գաղտնի հափշտակել իրեն պատկանող, առանձնապես խոշոր չափերով շուրջ 10.000.000 ՀՀ դրամ արժողության ոսկյա զարդեր և հուշադրամներ:

Դեպքի առթիվ 10.05.2017թ. ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 14106617 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել Գ. Ավետյանին, ով հայրեն գրավոր լեզվին չի տիրապետում, տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 15 հոդվածի համաձայն քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով, Անի Հովհաննիսյանը ազատ տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, ուստի ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր.-ի 15, 55 և 83 հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քեական գործով որպես թարգմանիչ ներգրավել << Արթ Քոնսալթինգ >> ՍՊ ընկերության թարգմանիչ Անի Սերյոժայի Հովհաննիսյանին/ հաշվառված ք. Երևան Դ. Անհաղթի 19/12. 70թն./:
2. Թարգմանիչ Ա. Հովհաննիսյանին ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քր. դատ. օր.-ի 83 հոդ/ նախատեսված նրանց իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր.-ի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝



Տ.Հ.Ղազարյան

Որոշմանը ծանոթացել եմ, իմ իրավունքներն ու պարտականությունները բացատրվել են, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:



Խաչատուրյան

ՏԵՂԵԿԱՆՔ

ԹԻՎ 14106617 ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ

28

07

2017 թ.

ք. Երևան

Տեղեկանքը տրվում է առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ս. Ղազարյան, վարչություն քննված թիվ 14106617 քրեական գործով 28.07.2017թ. որոշումով որպես թարգմանիչ ներգրավել են «Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի աշխատակից Անի Մերյոժայի Հովհաննիսյանին, ով կատարել է 3 ժամ 40 րոպե տևողությամբ ուսերենից հայերեն և հակառակը բանավոր թարգմանություն:

Արաբկիր վարչական շրջանի
քննչական բաժնի ավագ քննիչ՝



Ս. Ղազարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ ներգրավելու մասին

31 հուլիսի 2017 թ.

Ք.Երևան

ՀՀ ՔԿ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ
Կ.Մկրտչյան, քննարկելով վարույթում քննվող թիվ 14857917 քրեական գործի
նյութերը.

Պ ու ր գ ե ց ի

2017 թվականի հուլիսի 10-ին՝ 21-ի սահմաններում, Երևան քաղաքի Վրացական
4-րդ նրբանցք 5-րդ շենքի 9-րդ բնակարանում, կենցաղային հարցերի շուրջ ծագած
վիճաբանության ժամանակ, Կարեն Երջանիկի Մանուկյանը ձեռքերով բազմաթիվ
անգամ հարվածներ է հասցրել նախկին կնոջ՝ Գալինա Սեմյոնի Մանուկյանի մարմնի
տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Դեպքի առթիվ 20.07.2017թ. ոստիկանության Արաբկիրի բաժնում ՀՀ քրեական
օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվել է թիվ 14857917 քրեական գործը որը
21.07.2017թ. ուղարկվել է Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի
նախաքննությունը շարունակելու նպատակով:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Գալինա Մանուկյանը հայտարարել
է, որ չի տիրապետում իայերեն գրավոր լեզվին, այլ ազատորեն տիրապետում է
ռուսերեն գրավոր լեզվին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության
օրենսգրքի 83-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. "Արթ Զոնալթինգ" ՍՊԸ-ի աշխատակից Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին
ներգրավել թարգմանիչ և պարզաբանել ՀՀ քրեական դատավարության
օրենսգրքի 83-րդ հոդվածը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի
338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝



Կ.Մկրտչյան

Թարգմանիչ՝



Գ.Ա.Շիրմազանյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Թիվ 14857917 քրեական գործով

«13» 01

2018 թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում քննված թիվ 14857917 քրեական գործով 31.07.2017թ. որոշումով որպես թարգմանիչ ներգրավել եմ «Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի աշխատակից Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին, ով սույն գործի շրջանակներում կատարել է 6 ժամ 45 րոպե տևողությամբ բանավոր թարգմանություն՝ հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն:

Արաբկիր վարչական շրջանի
քննչական բաժնի քննիչ



Կ. Մկրտչյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

« 31 » հուլիսի 2017թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, արդարադատության կապիտան Ջ.Լ.Դադայանս վերանայնով թիվ 15197317 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017թ-ի հունիսի 27-ին ժամը 19:20-ին հաղորդում է տվել Հակոբ Խորենի Քնշիշյանը այն մասին, որ 25.06.2017թ. ժամը 07:30-ից մինչև 10:30-ն ընկած ժամանակահատվածում Խորենացի 26 հասցեի մոտ անհայտ տաքսու վարորդը գումարի դիմաց, հետագայում վերադարձնելու պատրվակով, իրենից վերցրել է իր «Սամսունգ» մոդելի բջջային հեռախոսը, սակայն խաբնությամբ ու վատահայտությամբ ճարաշահելու նպատակով տիրացել է նշված հեռախոսին և հեռացել՝ պատճառելով 350.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Փաստի առթիվ, 05.07.2017 թվականին, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 15197317 քրեական գործը:

2017 թվականի հուլիսի 05-ին որոշում է կայացվել թիվ 15197317 քրեական գործը Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ուղարկելու մասին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործով վկա Ալեքսանդր Ռաֆայելի Սիմոնյանցը չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է ռուսերեն բանավոր ու գրավոր լեզվին, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել թարգմանչի՝ Ալեքսանդր Սիմոնյանցի մասնակցությամբ կատարվելիք քննչական գործողություններին մասնակցելու համար:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻՒՄ


1. Թիվ 15197317 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Արտ Քոնսալթինգ» ՍՊ ընկերության տնօրեն Անի Սերյոժայի Հովհաննիսյանին /ծնված՝ 30.12.1987թ., հաշվառված և բնակվող ք.Երևան, Սարի Թաղ 17 փողոց, տուն 7 հասցեում/ ով տիրապետում է ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին:
2. Անի Սերյոժայի Հովհաննիսյանին պարգաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՔՆՆԻՉ՝



Զ.Ն. Դադայան

Ծանոթացա թարգմանիչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:



Ա. Հովհաննիսյանին

»ՅԺ« 07 2017թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն
և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ջ.Խ.
Դադայանս, վարույթումս քննված թիվ 15197317 քրեական գործով 31.07.2017
թվականին որպես թարգմանիչ ներգրավել եմ «Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի
թարգմանիչ Անի Հովհաննիսյանին, ով սույն քրեական գործի շրջանակներում
կատարել է 9 ժամ 40 րոպե ընդհանուր տևողությամբ հայերենից ռուսերեն և
հակառակը բանավոր թարգմանություն:

Քննիչ՝



Ջ. Խ. Դադայան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգման ներգրավելու մասին

« 02 » օգոստոսի 2017թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ Դ.Դ. Կիրակոսյանն, վերանայելով վարույթումս քննվող թիվ 58203216 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Մարգարիտա Աբգարի Մանուկյանը և Անահիտ Կառլենի Խաչատրյանն իրենց զավակների հարսանեկան արարողությանը Եգիպտոսում կազմակերպելու համար 2015թ. սեպտեմբերի 17-ին Երևանի Պարոնյան 6 հասցեում գործող «Համար մեկ տուրիստական գործակալություն» ՍՊԸ-ում՝ վերջինիս գործադիր տնօրեն Լուսինե Հովիկի Ջանինյանի հետ կնքել են արտագնա տուրիստական ծառայություններ մատուցելու մասին 21 անձի համար պայմանագիր՝ ընդհանուր 15.000 ԱՄՆ դոլար արժողությամբ: Պայմանագրի համաձայն Լ.Ջանինյանին փոխանցվել է կանխավճար 3.382.000 ՀՀ դրամի չափով, որից 864.000 ՀՀ դրամը Լ.Ջանինյանը պահանջել է փոխանցել իրեն առձեռն՝ պատճառաբանելով, որ դրան պետք է ավելացնի 600 ԱՄՆ դոլար և նոր միայն կատարի բանկային փոխանցում: 2015թ. հոկտեմբերի 30-ին տեղի ունեցած ավիավթարից հետո 2015թ. նոյեմբերի 01-ին Մ.Մանուկյանը հրաժարվել է ամբողջ փաթեթից և հետ պահանջել վճարած գումարը: Ի պատասխան ներկայացված պահանջի՝ Լ.Ջանինյանը տվել է 5.274 ԱՄՆ դոլարի վճարման կեղծ հանձնարարագիր, որում ձեռագիր ավելացված է եղել 1.860 ԱՄՆ դոլարի վերաբերյալ նշում, իսկ գումարը չի վերադարձրել՝ պատճառաբանելով, որ այն փոխանցվել է վրացական «Տուրի Ջի» ՍՊԸ-ին: Սակայն, 2015թ. դեկտեմբերի 30-ին Թբիլիսի մեկնած Մ.Մանուկյանի բարեկամներն այցելել են նշված ընկերություն, որտեղից էլ ստացել են գրավոր պարզաբանում առ այն, որ Մ.Մանուկյանի և նրա հետ մեկնող անձանց անուններով ոչ մի տոմսի կամ հյուրանոցի ամրագրում չի պատվիրվել:

Բացի այդ, Լ.Ջանինյանը 2015թ. դեկտեմբերի սկզբին Կարեն Հովհաննեսի Չոբանյանի, նրա կնոջ և երկու զավակների հանգիստը հունվարի 2-9 ԱՄԷ-ի Դուբայ քաղաքի «Շարժահ Գրանդ» հյուրանոցում կազմակերպելու պատրվակով՝ վերջինից պահանջել և առձեռն ստացել է 2.563 ԱՄՆ դոլարին համարժեք 1.248.000 ՀՀ դրամ, որի դիմաց տվել է ավիատոմսերը, մուտքի արտոնագրերը, հյուրանոցի վաուչերը: 2015թ. դեկտեմբերի 31-ին, երբ Կ.Չոբանյանը ընտանիքով գտնվել է Թբիլիսիում, որպեսզի այնտեղից մեկնեն Դուբայ, Լ.Ջանինյանը զանգահարել և հայտնել է, որ մուտքի արտոնագրերի հետ առաջացել են խնդիրներ և խորհուրդ է տվել չմեկնել՝ խոստանալով վերադարձնել վճարած գումարը տոնական օրերից հետո: ՀՀ վերադառնալուց հետո Կ.Չոբանյանը պարզել է, որ իրենց անվամբ ոչ մի ամրագրում հյուրանոցում չի կատարվել, իսկ մուտքի արտոնագրերը և Լ.Ջանինյանի կողմից էլեկտրոնային փոստով ուղարկած 2.500 ԱՄՆ դոլարի վճարման հանձնարարականը,

որով «Համար մեկ տուրիստական գործակալություն» ՍՊ ընկերությունն իբր վերադարձնում էր վճարված գումարը՝ կեղծ են:

Դեպքի առթիվ 02.03.2016թ. ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 58203216 քրեական գործը, որը տարածքային ենթակայության կարգով ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին՝ հետագա նախաքննությունը շարունակելու համար:

Թիվ 58203216 քրեական գործը նախաքննությունը շարունակելու համար ուղարկվել է ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչություն:

2017թ. օգոստոսի 04-ին թիվ 58203216 քրեական գործի նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ:

Նախաքննության ընթացքում ստացվել է իրավական օգնության պատասխան՝ վրացերեն լեզվով, ուստի այն թարգմանելու նպատակով նշված փաստաթղթերն ուղարկվել են ՀՀ ՔԿ դեպարտամենտ:

Նկատի ունենալով, որ թիվ 58203216 քրեական գործով անհրաժեշտ է քննչական պահանջի պատասխանը թարգմանել վրացերենից հայերեն, որի համար անհրաժեշտ է վրացերեն լեզվի թարգմանչի մասնակցությունը, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Որպես թարգման հրավիրել «Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի թարգմանիչ Էդիտա Մուրադյանին, ով ազատորեն տիրապետում է հայերեն և վրացերեն գրավոր ու բանավոր լեզվին, կարող է կատարել թարգմանություն վրացերենից հայերեն և հակառակը, գործով չչափազորված անձ է:
2. Թարգման Էդիտա Մուրադյանին պարզաբանել իր իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

Ավագ քննիչ՝



Դ.Ռ. Կիրակոսյան

Սույն որոշումը ինձ հայտնվել է, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված՝ թարգմանի պարտականություններն ու իրավունքները:

Թարգման՝



ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ Դ. Ռ. Կիրակոսյանս, վարույթումս քննվող թիվ **55158017** քրեական գործով, որը միացվել է 58203216 քրեական գործին, որի շրջանակներում 02.08.2017թ. որպես թարգմանիչ իմ կողմից ներգրավված է եղել «Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի թարգմանիչ Էդիտա Մուրադյանը և անհրաժեշտությունից ելնելով կատարել է գրավոր թարգմանություն հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն՝ 44895 նիշ:

Ավագ քննիչ՝

Դ. Ռ. Կիրակոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ մասնակից դարձնելու մասին

05.08.2017թ.

ք. Կապան

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Կարեն Ալավերդյանս, քննարկելով վարույթիս թիվ 41200517 քրեական գործի նյութերը՝ հարուցված ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով,

պ ա ր զ ե ց ի

2017թ. օգոստոսի 2-ին Սյունիքի մարզի դատախազության կողմից թիվ 41101417 քրեական գործի նյութերի ուսումնասիրության հիման վրա 2017թ. ապրիլի 30-ին՝ ժամը 22⁰⁰-ի սահմաններում, Կարեն Գարիի Գրիգորյանի կողմից իր՝ Կապանի Շահումյան փողոցի 31-րդ շենքի 2-րդ բնակարանում Նատալյա Վլադիմիրի Պողոսյանին պատկանող զգալի չափերով՝ 180.000 ՀՀ դրամ գումարի բացահայտ հափշտակության դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 41200517 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու համար ուղարկվել է Սյունիքի մարզային քննչական վարչություն:

2017թ. օգոստոսի 3-ին քրեական գործը ստացվել և ընդունվել է վարույթ, կատարվում է նախաքննություն:

Քրեական գործի նյութերում առկա տվյալներով տուժող Նատալյա Վլադիմիրի Պողոսյանը և վկաների մի մասը չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ քրեական դատավարությանը մասնակցող անձանց մի մասը չեն տիրապետում քրեական դատավարության լեզվին, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով և 83-րդ հոդվածով՝

ո Ր Ո Շ Ե ց ի

Նունե Խորենի Սարգսյանին /ծնվ. 1965թ., բարձրագույն կրթությամբ, ավարտել է Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտը, «Արթ Բոնասալթինգ» ՍՊԸ աշխատակից, գործով շահագրգռված անձ չէ/ վարույթիս թիվ 41200517 քրեական գործով մասնակից դարձնել որպես թարգմանիչ:

ՀԿԳ քննիչ



Կ. Ա. Ալավերդյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

թարգմանիչի իրավունքները և պարտականությունները պարզաբանելու
և քրեական պատասխանատվության վերաբերյալ նախազգուշացնելու մասին

<< 05 >> 08 2017թ.

Վ. Կարենյան

ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային ՔՎ ՀԿԳ քննիչ Կարեն Ալավերդյանս, ՀՀ քր. դատ. օր.-ի
29-րդ և 101-րդ հոդվածների պահպանմամբ, վարույթիս թիվ 412 005/18 քրեական
գործով թարգմանիչ Եսենկ Խոսեֆ Ասրադյան Ե/Է
հայտնեցի, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 83-րդ հոդվածի համաձայն՝

Թարգմանիչը իրավունք ունի՝

- 1) թարգմանությունը ճշգրտելու համար հարցեր տալ թարգմանության ընթացքում ներկա գտնվող անձանց
- 2) ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությանը, ինչպես նաև համապատասխան մասով՝ դատական նիստի արձանագրությանը և թարգմանության գրառումների լրիվության և ճշտության հետ կապված դիտողություններ անել, որոնք մտցվում են արձանագրության մեջ
- 3) ստանալ քրեական գործով վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում

Թարգմանիչը պարտավոր է՝

- 1) թարգմանություն կատարելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով
- 2) քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել թարգմանիչի՝ իր որակավորումը հաստատող փաստաթղթերը
- 3) քրեական վարույթն իրականացնող մարմնի, ինչպես նաև կողմերի պահանջով դատական նիստի ընթացքում տեղեկություններ հայտնել իր մասնագիտական փորձի և համապատասխան քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հետ հարաբերությունների մասին
- 4) թարգմանությունն ապահովելու համար անհրաժեշտ ամբողջ ժամանակահատվածում գտնվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման վայրում, դատական նիստերի դահլիճում և չլքել նշված գործողության կատարման վայրն առանց այն կատարող անձի թույլտվության, իսկ դատական նիստերի դահլիճը՝ առանց նախազաւհողի թույլտվության
- 5) թարգմանել լրիվ, ճշտորեն և ժամանակին
- 6) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախազաւհողի օրինական կարգադրություններին
- 7) դատական նիստի ընթացքում պահպանել կարգուկանոն
- 8) ստորագրությամբ հաստատել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությունում թարգմանության գրառումների

ՔԿԳ

լրիվությունը և ճշտությունը, ինչպես նաև քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը

9) առանց քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դռնփակ դատական նիստում իրեն հայտնի դարձած տեղեկությունները

Թարգմանիչը ունի նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

Թարգմանիչ Լուսինե Մարգարյան բացատրվեց, որ իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն, ինչպես նաև նախազգուշացվեց թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր.-ի 338-րդ հոդվածով և առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քր. օր.-ի 342-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ Յուրի Մարգարյան
ստորագրություն, ազգանուն

ՀԿԳ քննիչ Կ. Ա. Ալավերդյան Կ. Ա. Ալավերդյան

ՏԵՂԵԿԱՆՔ
/թիվ 41200517 ֆրեական գործով/

ՀՀ Բննչական կոմիտեի Այուսիքի մարզային Բննչական վարչության ՀԿԳ Ինելիշ Կարևի Ալավերդյան, վարույթումն Բննիլու թիվ 41200517 Բրեական գործով 05.08.2017 թվականին որպես թարգմանիչ ներգրավել եմ «Արթ Բոնասալթինգ» ՍՊԸ-ի թարգմանիչ Նունե Խորենի Սարգսյանին, ով սույն Բրեական գործի շրջանակներում կատարել է թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը՝ 14 մամ տևողությամբ:

ՀԿԳ Բննիչ՝



Կ. Ալավերդյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
/Թարգմանիչ ներգրավելու մասին/

« 10 » օգոստոսի 2017թ.

գ. Ախուրյան

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության կապիտան Ս. Օ. Մինասյանս, քննարկելով վարույթիս թիվ 30102417 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2016 թվականի դեկտեմբեր ամսից մինչև 2017 թվականի հունիս ամիսն ընկած ժամանակահատվածում Գագիկ Խաչատուրի Խաչատրյանը, խաբեության եղանակով՝ իր ընտանիքին որպես ժամանակավոր կացարան տրամադրված Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող Ախուրյան գյուղի Հոլանդական թաղամասի թիվ 6 հասցեի տնակը վաճառելու պատրվակով, Իննա Վանյայի Մկրտիչյանից հափշտակել է խոշոր չափերով՝ ընդհանուր 950.000 ՀՀ դրամ գումար:

Փաստի առթիվ 10.07.2017 թվականին Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնում հարուցվել է թիվ 30102417 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և կատարվում է նախաքննություն:

Նկատի ունենալով, որ քրեական գործով վկա Սուսաննա Վալենտինի Շուկինյան ոչ բավարար չափով է տիրապետում ՀՀ քրեական դատավարական լեզվին, սակայն տիրապետում է ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթիս թիվ 30102417 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Արթ Քոնսալթինգ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ՝ Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանին, ծնված 1960թ., Գյումրիում, հայ, ՀՀ քաղաքացի, բնակվում է Գյումրու Գորկու փողոցի 71 շենքի 5-րդ բնակարանում, բարձրագույն կրթությամբ, տիրապետում է հայերեն, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին, կարողանում է կատարել թարգմանություններ գրավոր և բանավոր՝ հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն լեզուներով:

2. Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանին նախազգուշացնել ակնհայտ կեղծ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, նրան միաժամանակ ծանոթացնել թարգմանի իրավունքների և պարտականությունների հետ:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝

Ս. Օ. ՄԻՆԱՍՅԱՆ

Ծանոթացա որոշմանը՝

Ա.Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

/թիվ 30102417 քրեական գործով/

« 10 » օգոստոսի 2017 թ.

գ. Ախուրյան

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության կապիտան՝ Ս.Օ.Մինասյանս, վարույթիս թիվ 30102417 քրեական գործով կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ «Արթ Քոնսալթինգ» ՍՊ ընկերության թարգմանիչ՝ Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանը 10.08.2017 թ. որպես թարգման է ներգրավվել և նույն օրը մասնակցել է քննչական գործողությունների՝ կատարելով գրավոր և բանավոր թարգմանություններ, որոնց ընդհանուր տևողությունը կազմել է 3 ժամ 35 րոպե:

ՇՄ քննչական վարչության ավագ քննիչ,
արդարադատության կապիտան՝



Ս.Օ.Մինասյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգման ներգրավելու մասին

11.08. 2017թ.

ք. Գյումրի

ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Մարտիրոսյանս, վերանայելով վարույթիս թիվ 90362117 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ ՊՆ Ամասիայի զինվորական կոմիսարիատի զորահավաքային բաժանմունքի պետ-զինվորական կոմիսարի տեղակալ, կապիտան Լևոն Սարգսի Սարգսյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ, 2017թ մայիս ամսին իր և նույն զինկոմիսարիատի զորահավաքային բաժանմունքի պահեստազորի զինվորների և սերժանտների հաշվառման, ամրագրման և նախորոշման գծով տեսուչ Էդգար Վարդանի Հարությունյանի համար որոշակի նյութական բարեկեցություն ապահովելու շահադիտական դրդումներով ՀՀ ՊՆ Ամասիայի զինկոմիսարիատում հաշվառված զինապարտ, Շիրակի մարզի Շաղիկ գյուղի բնակիչ, 08.01.1991թ ծնված Արմեն Ռոբերտի Սանոսյանի՝ “Զինապարտության մասին” ՀՀ օրենքով նախատեսված կարգով 20.05.2017թ Ամասիայի զինկոմիսարիատում վերազննման գործընթացը կազմակերպելու փոխարեն, կատարել է իշխանազանություն՝ վերջինիս զինվորական գրքույկի մեջ դրել է Ամասիայի զինկոմիսարի կնիքի դրոշմը և խնդրել Է.Հարությունյանի կնոջը՝ Սոնա Արմենի Մանուկյանին, պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող Ա.Սանոսյանի զինվորական գրքույկում կատարել ակնհայտ կեղծ գրառումներ այն մասին, թե իբր Արմեն Ռոբերտի Սանոսյանը 20.05.2017թ Ամասիայի զինկոմիսարիատում վերազննում է անցել և ճանաչվելով ոչ պիտանի զինծառայությանը՝ հանվել է հաշվառումից, միաժամանակ զինկոմիսարի փոխարեն դնել կեղծ ստորագրություն, ինչը վերջինիս կողմից կատարվել է: Այդ ամենի արդյունքում պատճառվել է էական վնաս՝ Ա.Սանոսյանը օրենքով նախատեսված կարգով վերազննում չի անցել և նրա՝ զինվորական ծառայությանը պիտանելիության հարցը չի որոշվել:

Դեպքի առթիվ 10.07.2017թ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով, 314-րդ հոդվածով, 38-314-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 90362117 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-375-րդ հոդվածի 1-ին մասով, 38-314-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել Էդգար Հարությունյանին, ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով, 314-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել Լևոն

Սարգսյանին, ՀՀ քրեական օրենսգրքի 38-375-րդ հոդվածի 1-ին մասով, 38-314-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել Աշոցքի զինկոմիսարի տեղակալ Լևոն Գրիգորյանին:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել որպես հարցաքննել Մորար Մարիա Գևորգիսնային, ով չի տիրապետում քրեական դատավարության գրավոր լեզվին, տիրապետում ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է քրեական գործով ներգրավել թարգմանիչ՝ ռուսերենից հայերեն և հայերենից ռուսերեն թարգմանելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր.- ի 55-րդ և 83 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով ռուսերենից հայերեն և հայերենից ռուսերեն թարգմանություններ կատարելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել “Արթ Քոնսալթինգ” ՍՊԸ թարգմանիչ Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանին:
2. Որոշման մասին հայտնել Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանին՝ նրան բացատրելով ՀՀ քր. դատ. օր-ի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքները և պարտականությունները:

Ավագ քննիչ

 Հ.Հ.Մարտիրոսյան

Տեղեկանք

Թիվ 90362117 քրեական գործով

<<4>> սեպտեմբերի 2017 թ.

ք.Գյումրի

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Մարտիրոսյանս վարույթիս թիվ 90362117 քրեական գործով կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ <<ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆՔ>> ՍՊ ընկերության թարգմանիչ Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանը 11.08.2017 թվականին, 1, 2 և 4-ը սեպտեմբերի 2017 թվականին ներգրավվել է որպես թարգմանիչ և նշված օրերին մասնակցել է քննչական գործողություններին, կատարելով թարգմանություններ, որի ընթացքում ընդհանուր առմամբ ծանրաբեռնվել է 13 ժամ 40 րոպե ժամանակով:

Ավագ քննիչ



Հ.Հ.Մարտիրոսյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

« 11 » օգոստոսի 2017թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, արդարադատության կապիտան Ջ.Խ.Դադայանս վերանայելով թիվ 13202917 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2017թ. հուլիսի 22-ին ոստիկանության կենտրոնական բաժնի ՀՈ բաժանմունքից հետաքննության բաժանմունք է ստացվել Մարիաննա Սարգսի Ժամկոչյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերն այն մասին, որ 2017 թվականի մարտ ամսին Հյուսիսային պողոտայում իր ծանոթ Ալեքսանդր Հարությունի Դոնիկյանը աշխատանքի տեղավորվելու պատրվակով իրենից վերցրել է 200 ԱՄՆ դոլար գումար, սակայն խաբեությամբ և իր վստահությունը չարաշահելու նդանակով տիրացել է նշված գումարին և իրեն աշխատանքի չի տեղավորել:

2017 թվականի օգոստոսի 01-ին որոշում է կայացվել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

2017 թվականի օգոստոսի 10-ին Երևան քաղաքի կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ս. Անդրեասյանի կողմից որոշում է կայացվել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին կայացված որոշումը վերացնելու և փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 13202917 քրեական գործը հարուցելու և նախաքննություն կատարելու համար ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ուղարկելու մասին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործով վկա Ալեքսանդր Հարությունի Դոնիկյան չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է արաբերեն բանավոր ու գրավոր լեզվին, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել թարգմանիչ՝ Ալեքսանդր Հարությունի Դոնիկյանի մասնակցությամբ կատարվելիք քննչական գործողություններին մասնակցելու համար:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 13202917 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել « Արտ Քոնսալթինգ » ՍՊ ընկերության աշխատակից Մարալ Մարտիրոսի Զաքարյանին /ծնված՝ 07.11.1982թ.,

հաշվառված և բնակվող ք.Երևան, Կոմիտասի պողոտա, 1-ին շենք, բն.249 հասցեում/ ով տիրապետում է արաբերեն բանավոր և գրավոր լեզվին:


2. Մարտի Մարտիրոսի Ջաքարյանին պարգաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախագգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՔՆՆԻՉ՝



Ջ.Խ. Դադայան

Ծանոթացա թարգմանչի իրավունքներին և պարտականություններին, նախագգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:




Մ.Մ. Ջաքարյանին

» 14 « 08 2017թ.

ՏԵՂԵԿԱԼՔ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության
Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի
քննիչ Ձ.Խ. Դադայան, վարույթումս քննված թիվ 13202917 քրեական
գործով 11.08.2017 թվականին որպես թարգմանիչ ներգրավել եմ «Արթ
Քոնսալթինգ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մարալ Չաքարյանին, ով սույն
քրեական գործի շրջանակներում կատարել է 22 ժամ 10 րոպե
ընդհանուր տևողությամբ հայերենից արաբերեն և հակառակը
բանավոր թարգմանություն:

Քննիչ՝  Ձ. Խ. Դադայան

16.03.18թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

« 15 » օգոստոսի 2017թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, արդարադատության կապիտան Զ.Խ.Դադայանս վերանայելով թիվ 15188517 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2017թ-ի հունիսի 07-ին ժամը 18:00-ի սահմաններում Տիգրան Մեծ պողոտայի 3/16 հասցեում գործող «Նիմա Ֆուդ» ռեստորանում Էջմին վազգենի Սուքասյանը և Արվին վազգենի Սուքասյանը անձնական հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ ծեծի են ենթարկել Հովսեփ Սարգսի Ավագյանին:

Փաստի առթիվ, 19.06.2017 թվականին, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժնում բաժնում ՀՀ քր. օր-ի 118-րդ հոդվածով հարուցվել է թիվ 15188517 քրեական գործը:

2017 թվականի հունիսի 19-ին որոշում է կայացվել թիվ 15188517 քրեական գործը կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ուղարկելու մասին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործով վկա Ամին Ֆիրուզի Բեգին չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, տիրապետում է արաբերեն բանավոր ու գրավոր լեզվին, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել թարգմանչի՝ Արմեն Նիկողայի Մեդվեդևի մասնակցությամբ կատարվելիք քննչական գործողություններին մասնակցելու համար:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 15188517 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել « Արթ Քոնսալթինգ » ՍՊ ընկերության աշխատակից Հերոս Ղարամանի Դիդարյանտին /ծնված՝ 22.06.1962թ., հաշվառված ք.Երևան, Գ.Մահարու փողոց, տուն 8 հասցեում/ ով տիրապետում է ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին:
2. Հերոս Ղարամանի Դիդարյանտին պարգևատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու

պարտականությունները, ինչպես նաև նախագրուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՔՆՆԻՉ՝



Զ.Խ. ԴԱԴԱՅԱՆ

Մանրթացա թարգմանիչի իրավունքներին և պարտականություններին, նախագրուշացվել են ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:




Հ.Վ. Դիդարյանտ

» 15 « 08 2017թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն
և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ջ.Խ. Դադայանս,
վարույթումն քննված թիվ 15188517 քրեական գործով 15.08.2017 թվականին
որպես թարգմանիչ ներգրավել եմ «Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի թարգմանիչ
Հերոս Դիդարյանյին, ով սույն քրեական գործի շրջանակներում կատարել է 11
ժամ ընդհանուր տևողությամբ հայերենից պարսկերեն և հակառակը բանավոր
թարգմանություն:

Քննիչ՝



Ջ. Խ. Դադայան

22.07.18թ.

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ ներգրավելու մասին

27.10.2017թ.

ք. Արմյան

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ՝
Ա. Մուրադյան, քննարկելով ՀՀ ոստիկանության Կոտայքի բաժնից ստացված թիվ
20108217 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2017 թվականի հունիսի 12-ին ոստիկանության Կոտայքի բաժնում հաղորդում է տվել
Լուսինե Սամվելի Մարգարյանը, այն մասին որ 2017 թվականի մայիսի 28-ից մինչև հունիսի
8-ը ընկած ժամանակահատվածում անհայտ անձը մուտք է գործել իր ընտանիքին
պատկանող Կոտայքի մարզի Ծաղկունք թաղամասի 4-րդ հասցեում գտնվող տուն և
ննջասենյակի զգեստապահարանի բաճկոնի գրպանից գաղտնի հափշտակել է մեկ հատ
ոսկյա մատանի և մեկ զույգ ոսկյա ականջօղ՝ իրեն պատճառելով 79.000 ՀՀ դրամի
գույքային վնաս:

Նյութերի նախապատրաստման ընթացքում նշված հանցագործության կատարելու
կասկածանքով ոստիկանության Կոտայքի բաժնի բերման ենթարկված Ինգա Սերգեյի
Սարգսյանը բացատրություն է տվել այն մասին, որ 2017 թվականի մայիսի 31-ին օգտվելով
տան մուտքի դուռը բաց լինելու հանգամանքից մուտք է գործել Լուսինե Սամվելի
Մարգարյանին պատկանող Կոտայքի մարզի Ծաղկունք թաղամասի 4-րդ հասցեում գտնվող
տուն և այնտեղից գաղտնի հափշտակել մեկ հատ ոսկյա մատանի, մեկ զույգ ոսկյա
ականջօղ:

Փաստի առթիվ 20.06.2017թ.-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1.1
կետով հարուցվել է թիվ 20108217 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես վկա
հարցաքննել Բալահովիտ գյուղի Ծաղկունք թաղամասի 4-րդ տան բնակչուհի Ալինա
Գասպարյանին, ով տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ հայերեն
գրավոր լեզվին չի տիրապետում:


ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15 հոդվածի համաձայն քրեական
դատավարությունը տարվում է հայերեն լեզվով, դատավարության ընթացքում
յուրաքանչյուր ոք, բացառությամբ վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունի հանդես
գալու այն լեզվով, որին տիրապետում է:

Նկատի ունենալով, որ «Արթ Քոնսալթինգ» ՍՊ ընկերության լիազորված թարգմանիչ՝
Տաթևիկ Գուգարքի Քոչարյանը ազատ տիրապետում է հայերեն և ռուսերեն բանավոր և
գրավոր լեզուներին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15 և
83 հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ


1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել Տաթևիկ Քոչարյանին և
նրան ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83
հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները,
միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու
համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված
պատասխանատվության մասին:

ՀԿԳ ՔՆՆԻՉ՝



Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ


Որոշմանը ծանոթացել են, իմ իրավույթները և պարտականությունները
բացատրվել են, նախազգուշացվել են ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու
համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:



ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն տեղեկանքը տրվում է առ այն, որ Կոտայքի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ա. Մուրադյանիս վարույթում քննվող թիվ 20108217 քրեական գործով 27.10.2017 թվականին որպես թարգմանիչ ներգրավել եմ «Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի թարգմանիչ Տաթևիկ Գուգարքի Քոչարյանին, ով թիվ 20108217 քրեական գործի շրջանակներում կատարել է 93 ժամ 40 րոպե տևողությամբ հայերեն-ռուսերեն-հայերեն բանավոր թարգմանություն:

ՀԿԳ քննիչ՝



Ա. Մուրադյան